AUSGABE 1 · ԹՈՂԱՐԿՈՒՄ 1

15. – 28.11.2026



Hisnak

Հիսնակ 2026

„Siehe, der Herr, der uns retten wird“

«Ահա՛ Տերը, որ փրկելու է մեզ»

NACH JESAJA 25,9 · ԸՍՏ ԵՍ. 25.9

Der Hisnak-Begleiter für Familien

Հիսնակի ուղեկից ընտանիքների համար

Armenische Gemeinde Baden-Württemberg e.V. · Բադեն-Վյուրթեմբերգի Հայ Համայնք

ZUM GELEIT

Liebe Familien,

fünfzig Tage lang bereitet sich unsere Kirche auf das Fest der Geburt und der Erscheinung unseres Herrn Jesus Christus vor. Diese Zeit heißt Hisnak, nach dem armenischen Wort für fünfzig. Über dem Hisnak dieses Jahres steht ein Wort des Propheten Jesaja, das wir am Barekendan-Sonntag gehört haben: „Siehe, der Herr, der uns retten wird." Es ist ein Wort für Menschen, die warten, und für Menschen, die vom Warten müde geworden sind. Es sagt: Ihr wartet nicht ins Leere. Einer kommt.

Wer einen lieben Gast erwartet, räumt auf, deckt den Tisch und schaut immer wieder zur Tür. So wollen wir in diesen Wochen auf Christus zugehen: jeder für sich im Gebet, als Familie am Küchentisch und als Gemeinde in der Heiligen Liturgie am Sonntag. Diese drei gehören zusammen und lassen sich nicht gegeneinander austauschen. Der Begleiter, den Sie in den Händen halten, ersetzt den Kirchgang nicht. Er nimmt auf, was wir am Sonntag gemeinsam hören, und trägt es in die Woche hinein.

Diese erste Ausgabe umfasst die ersten beiden Wochen des Hisnak. Danach erhalten Sie jede Woche eine neue Ausgabe, jeweils von Sonntag bis Samstag. In der letzten Woche, vom 29. Dezember bis zum 6. Januar, begleitet Sie das Heft Tag für Tag bis zum Fest, mit einem eigenen Blick auf den Jahreswechsel.

Ich wünsche Ihnen und Ihren Kindern gesegnete Tage.

Ihr Pfarrer Diradur Sardaryan

In dieser Ausgabe

Leitwort des Hisnak 2026 · Was ist Hisnak? · Allein, als Familie, als Gemeinde · Barekendan und erste Fastenwoche · 1. Hisnak-Sonntag: Reich bei Gott · Für die Kinder · Fasten, das teilt · Lesungen für jeden Tag · Familiengebet

ԱՌԱՋԱԲԱՆ

Սիրելի՛ ընտանիքներ,

հիսուն օր շարունակ մեր Եկեղեցին պատրաստվում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ծննդյան և Աստվածահայտնության տոնին: Այս ժամանակաշրջանը կոչվում է Հիսնակ՝ «հիսուն» բառից: Այս տարվա Հիսնակի առանցքը Եսայի մարգարեի մի խոսք է, որը լսեցինք Բարեկենդանի կիրակի. «Ահա՛ Տերը, որ փրկելու է մեզ»: Դա խոսք է նրանց համար, ովքեր սպասում են, և նրանց համար, ովքեր հոգնել են սպասելուց: Այն ասում է՝ դուք իզուր չեք սպասում. Մեկը գալիս է:

Ով սիրելի հյուր է սպասում, կարգի է բերում տունը, սեղան է պատրաստում և անընդհատ նայում է դեպի դուռը: Այդպես էլ մենք այս շաբաթներին ուզում ենք գնալ դեպի Քրիստոս՝ յուրաքանչյուրս անձնական աղոթքով, որպես ընտանիք՝ մեր սեղանի շուրջ, և որպես համայնք՝ կիրակնօրյա Սուրբ Պատարագին: Այս երեքն անբաժան են, և մեկը չի կարող փոխարինել մյուսին: Այս ուղեկիցը չի փոխարինում եկեղեցի գնալուն: Այն վերցնում է այն, ինչ կիրակի միասին լսում ենք, և տանում է շաբաթվա մեջ:

Առաջին թողարկումն ընդգրկում է Հիսնակի առաջին երկու շաբաթները: Այնուհետև ամեն շաբաթ կստանաք նոր թողարկում՝ կիրակիից մինչև շաբաթ: Իսկ վերջին շաբաթը՝ դեկտեմբերի 29-ից մինչև հունվարի 6-ը, ուղեկիցը ձեզ կուղեկցի օր առ օր՝ մինչև տոն՝ առանձին ուշադրություն դարձնելով նաև Ամանորին:

Ձեզ և ձեր զավակներին օրհնված օրեր եմ մաղթում:

Ձեր Տիրատուր քահանա Սարդարյան



„Siehe, der Herr, der uns retten wird.“

«Ահա՛ Տերը, որ փրկելու է մեզ»:

NACH JESAJA 25,9 · ԸՍՏ ԵՍԱՅՈՒ 25.9

Der Vers steht in der ersten Lesung des Barekendan-Sonntags (Jes 25,9–26,7). In der Einheitsübersetzung lautet sein Anfang: „Siehe, das ist unser Gott, auf ihn haben wir gehofft, dass er uns rettet.“

Համարը հնչում է Բարեկենդանի կիրակիի առաջին ընթերցման մեջ (Ես. 25.9-26.7)՝ «Ահա մեր Տեր Աստվածը, որի վրա հույս էինք դրել մենք, նա փրկեց մեզ»:

EIN GEDANKE ZUM LEITWORT

Hebt die Augen

Jesaja spricht in eine Zeit voller Angst. Fremde Heere bedrohen das Land, viele haben die Hoffnung verloren. Mitten hinein stellt der Prophet ein Bild: Gott bereitet auf dem Berg ein Festmahl für alle Völker und wischt die Tränen von jedem Gesicht. Da rufen die Menschen: ‚Siehe, das ist unser Gott, auf ihn haben wir gehofft.'

„Siehe" heißt: Hebt die Augen. Oft sehen wir nur, was uns bedrückt: Sorgen um Arbeit und Gesundheit, Nachrichten aus Armenien und aus der Welt, Streit und Einsamkeit. Der Hisnak wendet den Blick, nicht weg von der Wirklichkeit, sondern auf den, der in sie hineinkommt. In Betlehem und am Jordan wird sichtbar, was Jesaja angekündigt hat: Gott kommt, um zu retten. Jede Ausgabe dieses Begleiters fragt deshalb: Wo rettet Gott in den Lesungen dieser Woche, und wo begegnet er uns in unserem Alltag?

Բարձրացրե՛ք ձեր աչքերը

Եսայու խոսքը հնչում է վախով լի ժամանակում: Օտար զորքերը սպառնում են երկրին, շատերը կորցրել են հույսը: Եվ մարգարեն հենց այդ ժամանակ մի պատկեր է ներկայացնում. Աստված լեռան վրա խնջույք է պատրաստում բոլոր ազգերի համար և սրբում է արցունքները յուրաքանչյուր դեմքից: Եվ մարդիկ բացականչում են. «Ահա մեր Տեր Աստվածը, որի վրա հույս էինք դրել»:

«Ահա» նշանակում է՝ բարձրացրե՛ք ձեր աչքերը: Հաճախ մենք տեսնում ենք միայն այն, ինչը ճնշում է մեզ՝ աշխատանքի և առողջության հոգսեր, լուրեր Հայաստանից և աշխարհից, վեճեր և մենակություն: Հիսնակը շրջում է մեր հայացքը՝ ոչ թե իրականությունից հեռու, այլ դեպի Նա, Ով գալիս է այդ իրականության մեջ: Բեթղեհեմում և Հորդանանի ափին տեսանելի է դառնում այն, ինչ ավետել էր Եսային. Աստված գալիս է փրկելու: Ահա թե ինչու այս ուղեկցի յուրաքանչյուր թողարկում հարցնում է. որտե՞ղ է Աստված փրկում այս շաբաթվա ընթերցումներում, և որտե՞ղ է Նա հանդիպում մեզ մեր առօրյայում:

FÜR GROSS UND KLEIN

Was ist Hisnak?

Hisnak (Հիսնակ) kommt von „hisun“ (հիսուն), fünfzig. So viele Tage dauert ungefähr die Vorbereitungszeit vor dem 6. Januar. An diesem Tag feiert die Armenische Apostolische Kirche die Geburt Jesu und seine Taufe im Jordan in einem einzigen Fest: Gott kommt zu uns Menschen und zeigt sich der Welt.

Der Hisnak hat sechs Sonntage. An jedem hört die Kirche einen Abschnitt aus dem Propheten Jesaja, aus den Briefen der Apostel und aus dem Lukasevangelium. Jesaja ist der Prophet, der das Kommen des Messias angekündigt hat. Lukas erzählt, wie Jesus unterwegs ist und die Menschen lehrt.

Zum Hisnak gehören drei Fastenwochen: die erste Woche (16. bis 20. November), die Fastenwoche des heiligen Jakobus von Nisibis (ab 7. Dezember) und die Woche vor dem Fest (30. Dezember bis 5. Januar). In diesen Tagen verzichtet die Kirche traditionell auf Speisen von Tieren. In den Wochen dazwischen sind Mittwoch und Freitag Fasttage. Fasten heißt nicht hungern, sondern Platz schaffen: weniger von dem, was uns satt und träge macht, mehr Raum für Gott und für den Nächsten. Kinder, Kranke und ältere Menschen fasten nach ihren Kräften.

Barekendan, das „gute Leben“

Barekendan heißt wörtlich „gutes Leben“. So nennt unsere Kirche den Tag vor einer Fastenzeit: Die Familie kommt zusammen, man isst und feiert, man versöhnt sich und tritt dann gemeinsam in die Fastenzeit ein. In diesem Jahr war der Barekendan des Hisnak am Sonntag, 15. November.

Barekendan verpasst?

Wer den Beginn des Hisnak verpasst hat, spricht mit dem Pfarrer und beginnt heute zu fasten. Es ist nicht zu spät.

ՄԵԾԵՐԻ ԵՒ ՓՈՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ

Ի՞նչ է Հիսնակը

Հիսնակ անունը գալիս է «հիսուն» բառից: Մոտավորապես այդքան օր է տևում պատրաստության շրջանը մինչև հունվարի 6-ը: Այդ օրը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին մեկ տոնով նշում է Հիսուսի Ծնունդը և Նրա Մկրտությունը Հորդանան գետում. Աստված գալիս է մեզ՝ մարդկանց մոտ և հայտնվում է աշխարհին:

Հիսնակն ունի վեց կիրակի: Ամեն կիրակի Եկեղեցին ընթերցում է մի հատված Եսայի մարգարեից, առաքելական թղթերից և Ղուկասի Ավետարանից: Եսային այն մարգարեն է, ով կանխավ ավետեց Մեսիայի գալուստը: Ղուկասը պատմում է, թե ինչպես է Հիսուսը ճանապարհ անցնում և ուսուցանում մարդկանց:

Հիսնակի մեջ կա պահքի երեք շաբաթ՝ առաջին շաբաթը (նոյեմբերի 16-20-ը), Սուրբ Հակոբ Մծբնա հայրապետի պահքը (դեկտեմբերի 7-ից) և տոնին նախորդող շաբաթը (դեկտեմբերի 30-ից մինչև հունվարի 5-ը): Այդ օրերին Եկեղեցին ավանդաբար հրաժարվում է կենդանական ծագման կերակուրներից: Միջանկյալ շաբաթներին չորեքշաբթին և ուրբաթը պահքի օրեր են: Պահք պահել չի նշանակում սոված մնալ, այլ տեղ բացել. պակաս այն ամենից, ինչը մեզ կշտացնում ու ծուլացնում է, և ավելի շատ տեղ՝ Աստծու և մերձավորի համար: Երեխաները, հիվանդները և տարեցները պահք են պահում ըստ իրենց ուժերի:

Բարեկենդան՝ «բարի կենդանություն»

Այդպես է մեր Եկեղեցին կոչում պահքին նախորդող օրը. ընտանիքը հավաքվում է, միասին ճաշում ու ուրախանում են, հաշտվում են միմյանց հետ և հետո միասին մտնում պահքի շրջանը: Այս տարի Հիսնակի Բարեկենդանը նոյեմբերի 15-ին էր՝ կիրակի օրը:

Բարեկենդանը բա՞ց եք թողել

Ով բաց է թողել Հիսնակի սկիզբը, թող զրուցի քահանայի հետ և հենց այսօր սկսի պահք պահել: Ուշ չէ:

SO GEHEN WIR DURCH DEN HISNAK · ԱՅՍՊԵՍ ԵՆՔ ԱՆՑՆՈՒՄ ՀԻՍՆԱԿԸ

Allein, als Familie, als Gemeinde

Անձնապես, որպես ընտանիք, որպես համայնք

ICH · ԵՍ

Jeden Tag ein kurzes Gebet, am Morgen oder vor dem Schlafen. Wer mag, liest das Evangelium des Tages; den Plan finden Sie in diesem Heft.

Ամեն օր մի կարճ աղոթք՝ առավոտյան կամ քնելուց առաջ: Ով ցանկանում է, թող կարդա օրվա Ավետարանը. ընթերցումների ցանկը կգտնեք այս ուղեկցում:

WIR · ՄԵՆՔ

Einmal in der Woche ein Familienabend mit diesem Begleiter. Gemeinsam fasten, mit Rücksicht auf Kinder, Kranke und Ältere. Gemeinsam teilen und spenden.

Շաբաթը մեկ անգամ ընտանեկան երեկո այս ուղեկցով: Միասին պահք պահել՝ հաշվի առնելով երեխաներին, հիվանդներին և տարեցներին: Միասին կիսվել և նվիրաբերել:

KIRCHE · ԵԿԵՂԵՑԻ

Am Sonntag gehen wir zur Heiligen Liturgie.

Sie ist die Mitte des Hisnak und kein Zusatzangebot. Hier hören wir Gottes Wort, hier empfangen wir die Heilige Kommunion, hier sind wir Kirche. Ein altes Wort sagt: Ein Christ allein ist kein Christ. Kein Gebet zu Hause und kein Heft ersetzt die Begegnung mit Christus in seiner Kirche. Wer beichten und kommunizieren möchte, spricht den Pfarrer an.

Կիրակի օրը գնում ենք Սուրբ Պատարագի:

Այն Հիսնակի կենտրոնն է և ոչ թե լրացուցիչ առաջարկ: Այստեղ ենք լսում Աստծու խոսքը, այստեղ ենք ճաշակում Սուրբ Հաղորդությունը, այստեղ ենք Եկեղեցի դառնում: Մի հին խոսք ասում է. մենակ քրիստոնյան քրիստոնյա չէ: Ո՛չ տնային աղոթքը, ո՛չ էլ որևէ գրքույկ չեն կարող փոխարինել Քրիստոսի հետ հանդիպմանը Նրա Եկեղեցում: Ով ցանկանում է խոստովանվել և հաղորդվել, թող դիմի քահանային:

Gottesdienstzeiten · Ժամերգությունների ժամերը
agbw.org

JEDEN SONNTAGABEND · ԱՄԵՆ ԿԻՐԱԿԻ ԵՐԵԿՈ

Unser Familienabend

Մեր ընտանեկան երեկոն

1. Eine Kerze anzünden und sich bekreuzigen.
2. Erzählen: Was haben wir heute in der Heiligen Liturgie gehört und erlebt?
3. Leitwort, Kernvers und Bibeltext der Woche lesen.
4. Die Geschichte für die Kinder vorlesen.
5. Über die Tischfrage sprechen.
6. Gemeinsam das Familiengebet und das Vaterunser beten.
7. Die Wochenaufgabe verabreden.

1. Մոմ վառեք և խաչակնքվեք։
2. Պատմեք՝ ինչ լսեցինք և ապրեցինք այսօր Սուրբ Պատարագին։
3. Կարդացեք շաբաթվա բանալի խոսքը, ընտրված համարը և Ավետարանի հատվածը։
4. Բարձրաձայն կարդացեք երեխաների պատմությունը։
5. Զրուցեք սեղանի հարցի շուրջ։
6. Միասին ասեք ընտանեկան աղոթքը և «Հայր մեր»-ը։
7. Որոշեք շաբաթվա առաջադրանքը։

Unser Wegbegleiter an den Sonntagen: der Prophet Jesaja

An allen sechs Hisnak-Sonntagen liest die Kirche fortlaufend aus dem Buch Jesaja, von Kapitel 36 bis 41. Am ersten Sonntag hören wir, wie der König von Assyrien Jerusalem bedroht und König Hiskija verspottet: Worauf vertraust du eigentlich? Diese Frage begleitet uns durch den ganzen Hisnak, und das Leitwort gibt die Antwort: auf den Herrn, der uns retten wird.

Մեր ուղեկիցը կիրակիներին՝ Եսայի մարգարեն

Հիսնակի բոլոր վեց կիրակիներին Եկեղեցին հաջորդաբար ընթերցում է Եսայու գրքից՝ 36-րդից մինչև 41-րդ գլուխը։ Առաջին կիրակի լսում ենք, թե ինչպես է Ասորեստանի թագավորը սպառնում Երուսաղեմին և ծաղրում Եզեկիա թագավորին. «Ինչի՞ վրա ես հույս դրել»։ Այս հարցը մեզ կուղեկցի ամբողջ Հիսնակի ընթացքում, իսկ բանալի խոսքը պատասխանում է՝ Տիրոջ, որ փրկելու է մեզ։

SONNTAG 15. – SAMSTAG 21. NOVEMBER · ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-21

Barekendan und erste Fastenwoche

Բարեկենդան և պահքի առաջին շաբաթ

LESUNGEN DES BAREKENDAN-SONNTAGS · ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԸ

Jesaja 25,9–26,7 · Philipper 1,1–11 · Lukas 9,44–50

Ես. 25.9-26.7 · Փիլ. 1.1-11 · Ղուկ. 9.44-50

Ein Kind in der Mitte

Die Jünger streiten, wer von ihnen der Größte ist. Jesus antwortet nicht mit einer Rede. Er nimmt ein Kind und stellt es neben sich. Wer dieses Kind aufnimmt, sagt er, nimmt mich auf. Am Beginn des Hisnak steht damit eine einfache Frage: Wer steht bei uns in der Mitte? Barekendan ist das Fest der Familie vor dem Fasten. Dass Jesus gerade ein Kind in die Mitte stellt, ist für Familien ein Geschenk: Gott kommt nicht zuerst zu den Großen und Wichtigen, sondern zu den Kleinen. An Weihnachten wird er selbst ein Kind.

Մանուկը մեջտեղում

Աշակերտները վիճում են, թե իրենցից ով է մեծը: Հիսուսը նրանց ճառով չի պատասխանում: Նա վերցնում է մի մանուկ և կանգնեցնում իր կողքին: Ով այս մանկանն ընդունի իմ անունով, ասում է Նա, ինձ է ընդունում: Այսպիսով Հիսնակի սկզբում մի պարզ հարց է հնչում՝ ով է մեր մեջտեղում: Բարեկենդանը ընտանիքի տոնն է՝ պահքից առաջ: Եվ այն, որ Հիսուսը հենց մանկանն է կանգնեցնում մեջտեղում, պարգև է ընտանիքների համար. Աստված նախ գալիս է ոչ թե մեծերի ու կարևորների, այլ փոքրերի մոտ: Ծննդյան տոնին Նա Ինքը մանուկ է դառնում:

Frage für die Kinder · Հարց երեխաներին

Wer ist bei uns zu Hause manchmal klein und wird übersehen? Wie können wir ihm diese Woche eine Freude machen?

Մեր տանը ով է երբեմն փոքր և աննկատ մնում: Ինչպե՞ս կարող ենք այս շաբաթ նրան ուրախացնել:

FÜR ALLE, DIE TÄGLICH LESEN · ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՎՔԵՐ ԱՄԵՆ ՕՐ ԵՆ ԿԱՐԴՈՒՄ

Lesungen der ersten Fastenwoche

Պահքի առաջին շաբաթվա ընթերցումները

Mo 16.11. Երկուշաբթի	**Erster Fastentag** **Պահքի առաջին օր** Kol 1,1–11 · **Lk 11,14–23** Կող. 1.1-11 · **Ղուկ. 11.14-23**
Di 17.11. Երեքշաբթի	**Zweiter Fastentag** **Պահքի երկրորդ օր** Kol 1,12–23 · **Lk 11,27–32** Կող. 1.12-23 · **Ղուկ. 11.27-32**
Mi 18.11. Չորեքշաբթի	**Dritter Fastentag** **Պահքի երրորդ օր** Kol 1,24–2,7 · **Lk 11,33–42** Կող. 1.24-2.7 · **Ղուկ. 11.33-42**
Do 19.11. Հինգշաբթի	**Vierter Fastentag** **Պահքի չորրորդ օր** Kol 3,16–4,4 · **Lk 11,49–54** Կող. 3.16-4.4 · **Ղուկ. 11.49-54**
Fr 20.11. Ուրբաթ	**Fünfter Fastentag** **Պահքի հինգերորդ օր** Kol 4,5–18 · **Lk 12,1–12** Կող. 4.5-18 · **Ղուկ. 12.1-12**
Sa 21.11. Շաբաթ	**Darstellung der Gottesmutter im Tempel** **Սուրբ Աստվածածնի ընծայումը տաճարին** Hld 1,2–11 · Spr 11,30–12,4 · Jes 52,7–10 · Sach 2,10–13 · Mal 3,1–2 · 2 Kor 6,16–7,1 · **Lk 1,39–56** Երգ 1.2-11 · Առակ. 11.30-12.4 · Ես. 52.7-10 · Զաք. 2.10-13 · Մաղ. 3.1-2 · Բ Կորնթ. 6.16-7.1 · **Ղուկ. 1.39-56**

Das Evangelium des Tages ist hervorgehoben. Wer wenig Zeit hat, liest nur das Evangelium. · Օրվա Ավետարանը առանձնացված է: Ով քիչ ժամանակ ունի, թող կարդա միայն Ավետարանը:



1. HISNAK-SONNTAG · 22. NOVEMBER 2026 · ՀԻՍՆԱԿԻ Ա ԿԻՐԱԿԻ

Reich bei Gott

Աստծով հարստանալ

LESUNGEN DES SONNTAGS · ԿԻՐԱԿԻԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԸ

Jesaja 36,1–9 · 1 Thessalonicher 1,1–10 · Lukas 12,13–31

Ես. 36.1-9 · Ա Թես. 1.1-10 · Ղուկ. 12.13-31

AUS DEM EVANGELIUM · ԱՎԵՏԱՐԱՆԻՑ

[Hier folgt Lukas 12,16–21 in der Einheitsübersetzung und in der armenischen Übersetzung des Mutterstuhls Etschmiadsin. Der genehmigte Wortlaut wird nach Zusendung eingesetzt.]

KERNVERS DER WOCHE · ՇԱԲԱԹՎԱ ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔԸ

„Vielmehr sucht sein Reich; dann wird euch das andere dazugegeben.“

LUKAS 12,31

«Այլ դուք հետամուտ եղեք Աստծո արքայությանը, և այդ ամենը ավելիով կտրվի ձեզ»։

ՂՈՒԿ. 12.31

EIN GEDANKE FÜR DIE GROSSEN

Größere Scheunen

Ein Mann kommt zu Jesus mit einer Bitte, die uns vertraut ist: Sorge dafür, dass mein Bruder das Erbe mit mir teilt. Jesus lehnt es ab, Richter zu sein, und erzählt stattdessen eine Geschichte. Ein reicher Mann hat eine gute Ernte. Er überlegt, rechnet, plant: Die alten Scheunen reißt er ab, größere baut er auf, und dann will er endlich zur Ruhe kommen. Ein vernünftiger Plan, möchte man meinen. Nur eines fehlt darin völlig: ein anderer Mensch. Der Mann redet nur mit sich selbst, von meiner Ernte, meinen Scheunen, meiner Seele. Gott nennt ihn einen Narren, nicht weil er reich ist, sondern weil er mit seinem Reichtum allein bleibt.

Auch wir bauen an Scheunen. Nicht unbedingt aus Holz, sondern aus Terminen, Plänen und Sicherheiten. Gerade vor den Feiertagen füllen sich die Kalender und die Einkaufswagen. Das ist nicht verwerflich. Aber das Evangelium dieses Sonntags fragt leise: Für wen tust du das alles? Und wer sitzt am Ende mit dir am Tisch?

Jesus nimmt uns die Sorge nicht, indem er sie verbietet. Er zeigt auf die Raben und die Lilien und sagt: Euer Vater weiß, was ihr braucht. Das ist keine Vertröstung, sondern eine Einladung zum Vertrauen. Wer Gott zutraut, dass er sorgt, hat die Hände frei: zum Teilen, zum Umarmen, zum Beten.

Reich bei Gott zu werden heißt nicht, arm zu werden. Es heißt, den Reichtum in Bewegung zu bringen. Der Hisnak ist die Zeit, in der wir das üben: mit dem, was in unserem Kühlschrank steht, mit unserer Zeit und mit unserem Herzen. Wer weiß, dass der Herr kommt, um uns zu retten, muss sich nicht hinter größeren Scheunen verschanzen.

Worauf vertraust du?

Jesaja fragt es am selben Sonntag, Jesus erzählt davon im Gleichnis. Der reiche Mann vertraut seinen Vorräten. Wir dürfen dem vertrauen, der uns retten wird.

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆ ՄԵԾԵՐԻ ՀԱՄԱՐ

Ավելի մեծ շտեմարաններ

Մի մարդ մոտենում է Հիսուսին մեզ ծանոթ մի խնդրանքով. «Ասա եղբորս, որ ժառանգությունը կիսի ինձ հետ»: Հիսուսը հրաժարվում է դատավոր լինելուց և փոխարենը մի առակ է պատմում: Մի հարուստ մարդու արտերը առատ բերք են տալիս: Նա մտածում է, հաշվում, ծրագրում. քանդելու է հին շտեմարանները, ավելի մեծերն է կառուցելու, իսկ հետո վերջապես հանգստանալու է: Խելամիտ ծրագիր է, կասեր մեկը: Միայն թե դրանում բացակայում է մի բան՝ մյուս մարդը: Հարուստը խոսում է միայն ինքն իր հետ՝ իմ բերքը, իմ շտեմարանները, իմ հոգին: Աստված նրան անմիտ է անվանում ոչ թե այն պատճառով, որ նա հարուստ է, այլ որովհետև իր հարստության հետ նա մենակ է մնում:

Մենք էլ ենք շտեմարաններ կառուցում: Ոչ անպայման փայտից, այլ գործերից, ծրագրերից ու երաշխիքներից: Հատկապես տոներից առաջ լցվում են և՛ օրացույցները, և՛ գնումների զամբյուղները: Դրանում վատ բան չկա: Բայց այս կիրակիի Ավետարանը մեղմորեն հարցնում է. ո՞ւմ համար ես այս ամենն անում, և ո՞վ է վերջում քեզ հետ սեղանի շուրջ նստելու:

Հիսուսը մեր հոգսը չի վերացնում արգելքով: Նա ցույց է տալիս ագռավներին ու շուշաններին և ասում, որ մեր Հայրը գիտե, թե ինչ է մեզ պետք: Սա դատարկ մխիթարանք չէ, այլ վստահության հրավեր: Ով վստահում է, որ Աստված հոգ է տանում, նրա ձեռքերն ազատ են՝ կիսվելու, գրկելու և աղոթելու համար:

Աստծով հարստանալ չի նշանակում աղքատանալ: Դա նշանակում է հարստությունը շարժման մեջ դնել: Հիսնակն այն ժամանակն է, երբ մենք սովորում ենք դա անել՝ մեր սառնարանում եղածով, մեր ժամանակով և մեր սրտով: Ով գիտի, որ Տերը գալիս է մեզ փրկելու, կարիք չունի թաքնվելու ավելի մեծ շտեմարանների ետևում:

Ինչի՞ վրա ես հույս դրել

Նույն կիրակի այս հարցը տալիս է Եսային, իսկ Հիսուսը պատմում է դրա մասին առակով: Հարուստը վստահում է իր պաշարներին: Մենք կարող ենք վստահել Նրան, Ով փրկելու է մեզ:

FÜR DIE KINDER · ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Die größte Scheune der Welt

Աշխարհի ամենամեծ ամբարը

Ein Bauer hatte so viele Äpfel, Kartoffeln und so viel Korn geerntet, dass seine Scheune überquoll. „Ich baue mir eine riesige neue Scheune“, dachte er. „Dann gehört alles mir, und ich kann mich endlich ausruhen.“ An seine Nachbarn dachte er nicht, und an Gott auch nicht. Aber Gott sagte zu ihm: „Du Dummkopf! Du hast nur an dich gedacht. Was bleibt dir von all den Sachen, wenn du einmal nicht mehr da bist?“ Jesus erzählt diese Geschichte, damit wir verstehen: Ein voller Schrank macht noch nicht glücklich. Glücklich ist, wer teilt und Gott vertraut. Schau dir die Vögel an: Sie haben keine Scheune, und Gott gibt ihnen trotzdem zu essen.

Մի գյուղացի այնքան խնձոր, կարտոֆիլ ու ցորեն հավաքեց, որ ամբարն այլևս չէր տեղավորում: «Մի հսկայական նոր ամբար կկառուցեմ,– մտածեց նա,– այդ ժամանակ ամեն ինչ իմը կլինի, և ես վերջապես կհանգստանամ»: Նա չէր մտածում ոչ իր հարևանների, ոչ էլ Աստծու մասին: Բայց Աստված ասաց նրան. «Անմիտ, դու միայն քո մասին ես մտածել: Ի՞նչ կմնա քեզ այս բոլոր իրերից, երբ դու այլևս չլինես»: Հիսուսը պատմում է այս պատմությունը, որպեսզի հասկանանք. լիքը պահարանը դեռ երջանկություն չի բերում: Երջանիկ է նա, ով կիսվում է և վստահում է Աստծուն: Նայիր թռչուններին. նրանք ամբար չունեն, բայց Աստված կերակրում է նրանց:

Frage · Հարց

Was ist in deinem Leben ein Schatz, den man nicht kaufen kann?

Քո կյանքում ո՞րն է այն գանձը, որ հնարավոր չէ գնել:

Tischfrage · Սեղանի հարց

Für welches unbezahlbare Geschenk sind wir Gott diese Woche dankbar?

Այս շաբաթ ո՞ր անգին պարգևի համար ենք շնորհակալ Աստծուն:

WORT DER WOCHE · ՇԱԲԱԹՎԱ ԲԱՌԸ

գանձ [gandz] = der Schatz

der Schatz [դեր շաց] = գանձ

Իմ գանձը իմ ընտանիքն է: · Mein Schatz ist meine Familie.

AKTION DER WOCHE · ՇԱԲԱԹՎԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Fasten, das teilt

Պահք, որը կիսվում է

Gebet, Fasten und Almosen gehören seit jeher zusammen. Was wir durch das Fasten sparen, darf anderen zugutekommen. Ob Sie Dinge teilen oder Geld spenden: Entscheiden Sie gemeinsam als Familie.

Աղոթքը, պահքը և ողորմությունը միշտ միասին են եղել: Այն, ինչ խնայում ենք պահքի շնորհիվ, կարող է ծառայել ուրիշներին: Կիսվեք իրերով, թե նվիրաբերեք գումար՝ որոշեք միասին որպես ընտանիք:

Die Teilen-Kiste

Malt gemeinsam einen Karton an. Jeder legt hinein, was er gern verschenkt: ein Spielzeug, ein Buch, haltbare Lebensmittel. Am Ende des Hisnak bringt ihr die Kiste zu Menschen, die sie brauchen.

Կիսվելու արկղը

Միասին զարդարեք մի արկղ: Յուրաքանչյուրը թող դրա մեջ դնի մի բան, որ սիրով կնվիրի ուրիշին՝ խաղալիք, գիրք կամ երկար պահվող սնունդ: Հինանկի վերջում արկղը տարեք կարիքավորներին:



Das Hisnak-Spendenglas

Stellt ein Glas auf den Tisch. Jeder legt hinein, was er durch Fasten oder Verzicht spart. Am Ende des Hisnak spendet ihr den Inhalt gemeinsam.

Հինանկի նվիրատվության բանկան

Սեղանին դրեք մի ապակե բանկա: Յուրաքանչյուրը թող դրա մեջ գցի այն, ինչ խնայում է պահքի շնորհիվ: Հինանկի վերջում միասին նվիրաբերեք հավաքվածը:

UNSERE WOCHENAUFGABE · ՄԵՐ ՇԱԲԱԹՎԱ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

Das legen wir in unsere Teilen-Kiste oder dafür sparen wir im Spendenglas:

Ահա, թե ինչ ենք դնում մեր կիսվելու արկղի մեջ կամ ինչի համար ենք խնայում նվիրատվության բանկայում.

GEMEINSAM SPENDEN · ՄԻԱՍԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

Zwei Vorschläge für unser Spendenglas

Երկու առաջարկ մեր նվիրատվության բանկայի համար

VORSCHLAG 1 · ԱՌԱՋԱՐԿ 1

Aktion Weihnachtsfreude 2026/27 der Diözese

Die Diözese schenkt Familien in Artik (Provinz Schirak, Armenien) ein Weihnachtspaket mit Lebensmitteln, Hygieneartikeln und einem persönlichen Seelsorgebesuch. Ein Paket kostet 70 Euro.

Գերմանիայի Հայոց թեմը Արթիկում (Շիրակի մարզ) ընտանիքներին նվիրում է Սուրբ Ծննդյան փաթեթներ՝ սննդամթերքով, հիգիենայի պարագաներով և հոգևոր այցով: Մեկ փաթեթի արժեքը 70 եվրո է:

Diözese der Armenischen Kirche in Deutschland
IBAN DE56 3705 0198 0002 4024 85
Verwendungszweck: Weihnachtsfreude 2026/2027

VORSCHLAG 2 · ԱՌԱՋԱՐԿ 2

„Heimat schaffen!“: unsere Hl. Kreuz Kirche

Die Heilig-Kreuz-Kirche in Göppingen-Bartenbach ist seit 1983 die geistliche Heimat der Armenier in Baden-Württemberg. Jetzt wird der Innenraum saniert: Von 250.000 Euro fehlen noch rund 205.000 Euro.

Բարթենբախի Սուրբ Խաչ եկեղեցին 1983 թվականից Բադեն-Վյուրթեմբերգի հայերի հոգևոր տունն է: Այժմ վերանորոգվում է ներսը. 250.000 եվրոյից դեռ պակասում է մոտ 205.000 եվրո:

Armenische Gemeinde Baden-Württemberg e.V.
IBAN DE22 6105 0000 0049 0339 73 · BIC GOPSDE6GXXX
Verwendungszweck: Aktion „Heimat schaffen“

Mit dem Handy den QR-Code scannen, um mehr zu erfahren. · Ավելին իմանալու համար սկանավորեք QR կոդը:

FÜR ALLE, DIE TÄGLICH LESEN · ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՎՔԵՐ ԱՄԵՆ ՕՐ ԵՆ ԿԱՐԴՈՒՄ

Lesungen der ersten Hisnak-Woche

Հիսնակի առաջին շաբաթվա ընթերցումները

Mo 23.11. Երկուշաբթի	**Hll. Jungfrauen Juliana und Basilla** **Սուրբ կույսեր Հուլիանե և Վասիլուհի** Hld 8,14 · Hos 14,6–7 · 2 Kor 6,16–7,1 · **Lk 8,1–3** Երգ 8.14 · Ովս. 14.6-7 · Բ Կորնթ. 6.16-7.1 · **Ղուկ. 8.1-3**
Di 24.11. Երեքշաբթի	**Hl. Lukianos der Priester und weitere Jünger des Apostels Paulus** **Սուրբ Ղունկիանոս քահանա և Պողոս առաքյալի մյուս աշակերտները** Weish 9,9–12 · Jes 41,15–19 · 2 Kor 2,14–17 · **Lk 6,13–20** Իմաստ. 9.9-12 · Ես. 41.15-19 · Բ Կորնթ. 2.14-17 · **Ղուկ. 6.13-20**
Mi 25.11. Չորեքշաբթի	**Fasttag** **Պահք** 1 Thess 2,1–12 · **Lk 12,41–48** Ա Թես. 2.1-12 · **Ղուկ. 12.41-48**
Do 26.11. Հինգշաբթի	**Hl. Klemens von Rom und hl. Pankratius von Taormina** **Սուրբ Կղեմես Հռոմի հայրապետ և սուրբ Բագարատ եպիսկոպոս** Spr 8,33–36 · Jes 66,18–21 · Phil 4,1–7 · **Lk 9,1–6** Առակ. 8.33-36 · Ես. 66.18-21 · Փիլ. 4.1-7 · **Ղուկ. 9.1-6**
Fr 27.11. Ուրբաթ	**Fasttag** **Պահք** 1 Thess 2,17–19 · **Lk 12,49–59** Ա Թես. 2.17-19 · **Ղուկ. 12.49-59**
Sa 28.11. Շաբաթ	**Hll. Apostel Thaddäus und Bartholomäus, die ersten Erleuchter Armeniens** **Սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներ՝ Հայաստանի առաջին լուսավորիչները** Weish 9,13–10,2 · Jer 16,16–19 · 1 Kor 12,26–13,10 · **Mt 9,35–10,7** Իմաստ. 9.13-10.2 · Երեմ. 16.16-19 · Ա Կորնթ. 12.26-13.10 · **Մատթ. 9.35-10.7**

Samstag, 28. November: unsere ersten Erleuchter

Nach der Überlieferung kamen die Apostel Thaddäus und Bartholomäus schon im ersten Jahrhundert nach Armenien und verkündeten Jesus Christus. Deshalb heißt unsere Kirche „apostolisch“: Ihr Glaube geht auf die Apostel zurück.

Ըստ ավանդության՝ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները դեռևս առաջին դարում եկան Հայաստան և քարոզեցին Հիսուս Քրիստոսին: Այդ պատճառով էլ մեր Եկեղեցին կոչվում է Առաքելական:

FAMILIENGEBET · ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՈԹՔ

Herr Jesus Christus, du kommst zu uns, um uns zu retten. Wir haben so viel, und doch vergessen wir oft, wer es uns geschenkt hat. Mach unser Herz weit, damit wir teilen können. Nimm uns die Sorgen, die uns eng machen, und lehre uns, zuerst dein Reich zu suchen. Segne unsere Familie und unsere Gemeinde in diesen Tagen des Hisnak. Amen.

Տեր Հիսուս Քրիստոս, Դու գալիս ես մեզ մոտ՝ մեզ փրկելու: Մենք այնքան շատ բան ունենք, բայց հաճախ մոռանում ենք, թե ով է այդ ամենը մեզ պարգևել: Ընդարձակիր մեր սիրտը, որ կարողանանք կիսվել: Վերցրու մեզնից այն հոգսերը, որոնք նեղացնում են մեզ, և սովորեցրու մեզ նախ Քո արքայությունը փնտրել: Օրհնիր մեր ընտանիքը և մեր համայնքը Հիսնակի այս օրերին: Ամեն:

Zum Abschluss beten alle das Vaterunser · Ավարտին բոլորը միասին ասում են «Հայր մեր»-ը

NÄCHSTE WOCHE · ՀԱՋՈՐԴ ՇԱԲԱԹ

2. Hisnak-Sonntag, 29. November: Lukas 13,1–9, der Feigenbaum, der noch eine Chance bekommt.

Հիսնակի Բ կիրակի, նոյեմբերի 29. Ղուկ. 13.1-9՝ թզենին, որին ևս մեկ հնարավորություն է տրվում:

Impressum · Herausgeber: Armenische Gemeinde Baden-Württemberg e.V., Lerchenbergerstraße 52, 73035 Göppingen, agbw.org · Texte: Pfarrer Dr. Diradur Sardaryan · Lesungen nach dem Kirchenkalender der Armenischen Apostolischen Kirche (sacredtradition.am) · Bibelzitate: Einheitsübersetzung der Heiligen Schrift © 2016 Katholische Bibelanstalt GmbH, Stuttgart; Աստվածաշունչ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, in reformierter Rechtschreibung, jeweils mit Genehmigung · Gestaltung und Illustrationen: AGBW